«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Դ.Դեմիրճյանի <<Վարդանանք>>պատմավեպի ուսուցումը տասնմեկերորդ դասարանում

ԱՌԱՐԿԱ հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Կարինե Ասլանյան

ՄԱՐԶ Արմավիրի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Էջմիածնի Գր.նարեկացու անվան N2 ավագ դպրոց

<<Հայրենիք մի՛ սպասեք օտարից և ճակատագրից,եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք>>։

Գարեգին Նժդեհ

<<Առաքելության ամենամեծ սխրանքները կատարվել են հայրենիքի հանդեպ ունեցած սիրուց>>։

Ռուսսո

<<Մահ ոչ իմացեալ մահ է ,մահ իմացեալ՝անմահութիւն>>։

Եղիշե

<<Վարդանանք>>պատմավեպի ուսուցումը ավագ դպրոցում :

Ուսուցչի հետազոտական գործունեությունը գիտակցված ,ինքնուրույն և պատասխանատվությամբ իրագործվող պրակտիկ գործունեություն է՝ուղղված մանկավարժական գործունեության մասնագիտական որակների զարգացմանն ու կատարելագործմանը։

Կրթության ոլորտում վերջերս աստիճանական անցում է կատարվում դեպի նոր ձևաչափեր,որոնք ավելի ժամանակակից են և համապատասխանում են հասարակության ու պետության նոր պահանջներին՝ուղղված տվյալ ժամանակահատվածում աճող սերնդի դաստիարակությանն ու կրթությանը։Հետևաբար նոր պահանջներ ներկայացվում են նաև ուսուցիչներին ՝տարբեր կրթական հաստատություններում աշխատող։Այս դեպքում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այնպիսի անձնական հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը ,ինչպիսիք են նախաձեռնությունը,ստեղծագործական մտածողությունը,արագ և կրեատիվ որոշումների կայացումը։

Այս ողջ հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը նպաստելու է հետազոտական գործունեության կազմակերպումը,որն էլ իր հերթին նպատակ է հետապնդում ՝հաղթահարելու արդեն գոյություն ունեցող կրթական համակարգի չափորոշիչների և կրթությանը ներկայացվող նոր պահանջների հակասությունը։

Ժամանակակից մանկավարժներից շատերը զգոն են ՝ընկալելու ,հարմարվելու և ներառնելու մշտապես փոփոխվող իրականությունը։Այսօրվա ուսուցիչը պիտի հետևի կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին՝ծանոթանալով և հետագայում տիրապետելով դաստիարակության և կրթության ժամանակակից մեթոդներին,հնարներին և,ամենակարևորը,հետաքրքրություն ստեղծի սովորողների

մոտ դեպի իր անձն ու գիտելիքը։Այս դեպքում տեղին է հիշել հնուց եկած միտքը՝ <<ծանի՛ր զքեզ>>։Հենց այստեղ էլ բազմաբնույթ մտածողության տեսությունը ուսուցչին տալիս է առկա խնդիրների լուծման լայն հնարավորություններ՝հաշվի առնելով գիտելիքների ձեռքբերման ճանապարհների բազմազանությունն ու յուրաքանչյուրի անհատականության ու ինքնության պահպանումը։

Բազմակարծության հնարավորությունը,տարբեր տեսակետների լուծումների առաջադրումները ,հիմնավորումները կարևոր պայման են դասընթացի արդյունավետությունն ապահովելու համար։Ուստի հանրակրթության գլխավոր նպատակն է սովորողների մտավոր ,հոգևոր ,ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը,նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը ,ազգային ինքնագիտակցության կարևորումը՝համամարդկային արժեքների զուգորդմամբ։Եվ այս բոլորը իրենց վերջնական լուծումը պիտի ստանան ավագ դպրոցում ։



Այդ իսկ պատճառով էլ կարևորենք հանրակրթության կազմակերպման սկզբունքները։




Պետական լեզու
գրական հայերենի երկու ճյուղերը
մշակույթ
ազգային ինքնություն
միասնականություն
հզորություն


Կրթական գործընթաց
մանկավարժություն
հոգեբանություն
ուսուցման ժամանակակից մեթոդներ
ՏՀՏ

ՈՒՍՈՒՑՉԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- գործունեության պլանավորում
- դասավանդման ժամանակակից մեթոդներ
- ուսումնական նյութերի ստեղծում
- գնահատման համակարգի վերանայում
- ինքնակրթություն

Ուսուցչիարդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին,հնարներին ,եղանակներին տիրապետելն է:

Լեզուն և հայ գրականությունը ուսումնական յուրահատուկ բնագավառ է ,քանի որ մայրենին անհատի հոգեկերտվածքի ձևավորման հիմքերի հիմքն է,մեր պետական խորհրդանիշըև ազգային անվտանգության երաշխիքը:

Իր նպատակին հասնելու համար ուսուցիչը պետք է հիմնավորապես ուսումնասիրի <<Հայոց լեզու>>և <<Հայ գրականություն>>ուսումնական բնագավառի բովանդակության բաղկացուցիչները:

Միջնակարգ կրթության բովանդակության բաղկացուցիչները



Ավագ դպրոցի հ.լեզվի և հայ գրականության առարկայական չափորոշիչը

իր բաժիններով

Բացատրագիր		**Պարտադիր միջուկ**		
<<Հ.լեզու և հայ գրականություն>>ուսումնական առարկայի հայեցակարգ		Առարկաների ընդհանուր նպատակները	Ուսումնական գործունեության տեսակետներ	Սովորողին ներկայացվող նվազագույն պահանջները

Դ Դեմիրճյանի <<Վարդանանք>>պատմավեպը

<<Վարդանանք>>պատմավեպը երևույթ էր 20-րդ դարի հայ արձակի մեջ։<<Վարդանանք>.պատմավեպը նույնքան երկարակյաց կլինի ,որքան Եղիշեի ոսկեբանյանը՝Վարդանանց ճակատամարտին նվիրված հայագիտական,միևնույն ժամանակ գեղարվեստական կողմերով օժտված գիրքը։

Հայրենական պատերազմի տարիներին ,երբ վճռվում էր մեր հայրենիքի բախտը ,հայ ազգի լինել-չլինելու հարցը ,խիստ անհրաժեշտ էր հայրենաշունչ մի պատմավեպի առկայությունը,որն էլ հենց դարձավ <<Վարդանանքը>>,ինչպես Իսահակյանն էր նշում՝ <<ինքնաճանաչողության գործող փաստաթուղթը>>։

Որպես պատմական նյութ՝Դեմիրճյանը օգտագործել է Եղիշեի <<Վասն Վարդանայ և հայոց պատերազմին>>նշանավոր երկը,որը գրվել է Մամիկոնյան Դավիթ երեցի խնդրանքով,և Փարպեցու <<Հայոց պատմություն>>ոսկեդարյան ստեղծագործությունը։

Դ.Դեմիրճյանի<<Վարդանանք>>պատմավեպի ուսուցումը ավագ դպրոցում

Յուրաքանչյուր թեմա անցնելիս ուսուցիչը իր առջև դնում է նպատակ ,որն էլ բխում է պետական կրթակարգից և առարկայական չափորոշիչներից։Ուսուցիչը շեշտադրում է գիտելիքը ՝հաշվի առնելով սովորողների կարողություններն ու հմտությունները,նրանց մոտ զարգացնելով ճանաչողությունն ու տրամաբանությունը,հաղորդակցվելու ,համագործակցելու և ինքնուրույն աշխատելու կարողությունները։

Գիտելիքների ,կարողությունների,հմտությունների ,ինչպես նաև արժեքային համակարգի բարձր մակարդակը շարունակական գործընթաց է ողջ ուսումնառության ընթացքում ։

Ազգային արժեքների պահպանման և դրսից ներմուծվող նոր մարտահրավերների դեմ զգոնության շեշտադրումը ավագ դպրոցում խիստ կարևորվում է արդի ժամանակահատվածում։Ուստի պատմավեպերի ուսուցմանը առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնել և սովորողների մոտ հետաքրքրություն առաջացնել հանդեպ հայ ազգի պատմական կարևորագույն ժամանակահատվածների ուսումնասիրմանն ու արժևորմանը։Հայ պատմավեպերի շարքում ազգային արժեքների և պատմական աշխարհայացքի ձևավորման հարցում անփոխարինելի տեղ և դեր ունի <<Վարդանանք>.պատմավեպը։

Յուրաքանչյուր ազգի գոյատևման և զարգացման հիմքը հայրենասիրությունն է ,դրա անկյունաքարը՝դպրոցը,ուր ձևավորվում է ազգային անխաթար,պայծառ հոգեկերտվածքով անհատը;

Յուրաքանչյուր աշակերտ հետազոտության ընթացքում պետք է ուսումնասիրի իր պատմությունը,ճանաչի ու դասեր քաղի `աշխարհաքաղաքական այս վայրիվերումների պայմաններում հայ մնալու ,սեփական պատմության հերոսական դրվագներով ոգեշնչվելու ,արհեստականորեն հրամցվող նոր

<<բազմազանություններին>>կուլ չգնալու և շենշող ապագայի պայծառատեսության պայմանով։եվ այս ամբողջը պիտի ուղեկցվի սեփական կարծիք ձևավորելու հաստատակամությամբ։

<<Մարդուն նախապատրաստել անկեղծ պայքարի հենց ինքն իր և կյանքի հետ ;Ահա դաստիարակության գլխավոր խնդիրը;Ոչ թե սեփական համոզմունքները պարտադրել երեխային ,այլ նրա մեջ արթնացնել այդ համոզմունքների ծարավ…>>:

Պիրոգով

Հենվելով մեր մանկավարժական փորձի և վերապատրաստման ընթացքում ձեռք բերած գիտելիքների ,ժամանակակից մեթոդների ընձեռած հնարավորությունների վրա ` ցուցադրում ենք <<Վարդանանք>>պատմավեպի դասի 3 նմուշօրինակ։

I նմուշօրինակ

Դասի թեման՝Դ.Դեմիրճյանի <<Վարդանանք>.պատմավեպը

Առարկան՝հայ գրականություն

Դասատիպ՝ԽԻԿ համակարգ

Տևողություն՝45՛

Դասի նպատակը՝ակադեմիական

Դասի ընթացքը

Քայլ առաջին.դասարանը բաժանել խմբերի (20/5=4 խումբ)

Քայլ երկրորդ.դասը սկսել մտագրոհով:

Խթանման փուլ

Հարց 1 Ի՞նչ որակների պիտի տիրապետի գրողը ,որ իրավունք ունենա վեպ գրելու:



Քայլ երրորդ;Հարց 2 Ինչու՞ գրվեց վեպը:

Վեննի դիագրամի միջոցով սովորողները ցույց են տալիս Ավարայրի ճակատամարտի ր Մեծ հայրենականի առանձնահատկություններն ու ընդհանրությունները՝կապելով այսօրվա ցեղասպան պատերազմի հետ :

<<Մահ ոչ իմացեալ մահ է,մահ իմացեալ՝անմահութիւն>>:



Քայլ4:

Աշակերտներից մեկը ընթերցում է Դեմիրճյանի գրառումը <<Վարդանանք>>պատմավեպի ստեղծման վերաբերյալ:

<<Վարդանանք>>պատմավեպը ես գրեցի Հայրենական մեծ պատերազմի ժամանակ;Այն արտակարգ ,ժողովրդկան ուժերի գերազանց լարման պահերին,երբ վճռվում էր մեր հայրենիքի լինել-չլինելու ճակատագրական խնդիրը:

Ես զգացի ,որ <<Վարդանանքի>>պահանջը օդի մեջ է ...Ես գիտակցում էի ,որ պատերազմը հայրենական է ,այսինքն՝համաժողովրդական,երբ զանգվածները վեր են կենում՝պաշտպանելու հայրենիքը,նրա հողը ,կյանքը , և կռիվը կյանքի մահի կռիվ է :Ես հիշեցի հինգերորդ դարը հայ ժողովրդի կյանքի-ահի կռիվը պարսից բռնակալության դեմ ,և քանի որ ժողովուրդը դուրս էր եկել Հայրենական մեծ պատերազմի ,ես կամեցա հիշեցնել հայրենիքի պաշտպանության պատերազմներ,որոնց մեջ ամենամեծը Վարդանանց պատերազմն է>.>:

Քայլ 5.Ընթերցումից անմիջապես հետո համակարգչի և տեսածիրի միջոցով ցուցադրվում է կադր Միխայիլ Ռոմմի <<Սովորական ֆաշիզմ>>ֆիլմից Շոստակովիչի ցնցող երաժշտության ուղեկցությամբ:

Քայլ6: Ուսուցիչը լրացնում և աշակերտների ուշադրությունն է բևեռում հետևյալ խոսքերի վրա,<<Պատմությունից վերցնենք ոչ թե մոխիրը ,այլ կրակը՝սերունդների հոգում Ավարայրներ բոցավառելու համար>>:

Քայլ7:լավագույն ասմունքող աշակերտը ընթերցում է Վ.Մամիկոնյանի բոցաշունչ ճառը՝ուղղված իր զինվորներին (<<Արդ ,աղաչում եմ ձեզ,ո՛վ իմ քաջ զինակիցներ...>>):

Ընթացքում հնչում է Կարլ Օրֆի “Carmina burana”-ի “”Fortuna imperatrix mundi’’երաժշտական հզոր հատվածը,որն ավելի է ուժգնացնում Մամիկոնյանի խոսքը:

Այս փուլում Բլումի սանդղակին համապատասխան սովորողները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ ,փաստեր պատմությունից ,համաշխարհային երաժշտական գանձարանից ,կերպարվեստից ,գրականությունից :Հետևաբար ,աշակերտներն խորությամբ են ընկալում և ըմբռնում նյութը:

Քայլ8: Հաջորդիվ համակարգչի օգտագործմամբ ցուցադրվում է նյութին առնչվող տեսասահիկ:

Քայլ9:Հաջորդ քայլը կարող է լինել փոխգործուն նշաններով համակարգը:Աշակերտները նշումներ են անում տեսած ֆիլմի ,լսած երաժշտության և ընթերցածի վերաբերյալ:

+	_	?	/	V
հետաքրքիր է	Հակասում է իմ իմացածին	չգիտեմ	նոր տեղեկույթ	դա գիտեմ

ՔԱՅԼ 10:

Աշակերտները խմբերով ամբողջացնում և ներկայացնում են աղյուսակը,համեմատում են իրենց իմացածն ու ուսուցչի բացատրությունները,նաև ցուցադրված կադրերը ,լսած երաժշտությունը;Խոսում են ստացած տպավորությունների մասին
Այս փուլում աշակերտները համադրում են ,վերլուծում և ինքնուրույն հանգում են հիմնավորումների:

ՔԱՅԼ11:

Ամփոփում:Օգտագործել կշռադատման փուլում <<կրկնակի գրառումների օրագիր>>մեթոդը:

Տեքստից հատված	Ինչու՞ է ընտրվել հենց այս հատվածը

Այս մեթոդը արդյունավետ է ,երբ ուսուցիչը քննարկումը ուղղորդում է ընդհանրացված հարցադրումներով:Դրանք օգնում են սովորողին տեքստի ամբողջական ընկալման գործում:

Այս մեթոդը արդյունավետ է ,երբ ուսուցիչը քննարկումը ուղղորդում է ընդհանրացված հարցադրումներով:Դրանք օգնում են աշակերտին տեքստի ամբողջական ընկալման գործում:

1.Ի՞նչ հիշողություններ արթնացան այս նյութն ընթերցելիս:

2. Ի՞նչ եք մտածում ,երբ ընթերցում եք տեքստը:

3. Ի՞նչպես կվերնագրեք այս տեքստը:

4.Ըստ ձեզ՝ո՞րն է այս հատվածի ամենակարևոր գաղափարը:

5.Ի՞նչ կփոխեք այս տեքստում;

6.Ի՞նչ միջոցներով է հեղինակը փորձում գրավել ընթերցողի ուշադրությունը:

Այս փուլում աշակերտները դատողություններ են անում գրական-գեղարվեստական տեքստերի ,երաժշտական և արվեստի այլ ճյուղերի ստեղծագործությունների վերաբերյալ՝առաջնորդվելով ինչպես սեփական ,այնպես էլ համընդհանուր չափանիշներով;Այս փուլում սովորողը արժևորում է իր անելիքը:

II ԴԱՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

Առարկան՝հայ գրականություն

Դասարան՝տասնմեկերորդ

Դասատիպ՝ԽԻԿ համակարգ

Թեման՝Դ.Դեմիրճյանի<<Վարդանանք>>պատմավեպի ուսուցումը:

Դասը կազմվում է լիակատար (ամբողջական) յուրացման տեխնոլոգիայով;

Յուրացման նպատակը:Խմբային հետազոտության մեթոդը կիրառելով՝ուսուցիչը հետապնդում է 2 հիմնական նպատակ:

1. Խմբային հետազոտությունը աշակերտին սովորեցնում է համակարգված աշխատել,վերլուծական մոտեցումով հետազոտել առաջադրված խնդիրները:

2. Աշակերտները խորությամբ ուսումնասիրում են ուսումնական նյութը:

Այսպիսով՝աշակերտները յուրացնում են բովանդակությունը,զարգացնում հետազոտելու և համագործակցային աշխատանքի հմտություններ:

Անհրաժեշտ պարագաներ: Դասագիրք,համակարգիչ,Իսաբեկյանի ու Խանջյանի նկարների վերատպությունները:

Խմբի չափը.20/4

Դասի ընթացքը:Քայլ առաջին:

Դասը սկսում ենք մտագրոհով:



<u>ՔԱՅԼ 2: Խմբերի բաժանում:Կազմվում է 4 խումբ:</u>

ՔԱՅԼ3:Խմբերին տրվում է առաջադրանք ;կազմել ժամանակագրական աղյուսակ՝ըստ պատմիչներ Եղիշեի ,Փարպեցու և Դեմիրճյանի <<Վարդանանք>>պատմավեպի:

ՔԱՅԼ 4:Խմբային աշխատանքների ներկայացում ;պաստառների կազմում:

Էջ 11

ՔԱՅԼ 4:Խմբային աշխատանքների ներկայացում:

Մոտավոր ճշտումներով ներկայացնենք Վարդանանց շարժման ժամանակագրության պատկերը

Թվականը	Նկարագրվող իրադարձությունները
428թ.	Արշակունյաց թագավորության վերացումը
442թ.	Վասակ Սյունին նշանակվում է Հայաստանի մարզպան
446թ.	Դենշապուհը աշխարհագիր է անցկացնում Հայաստանում
450թ.	Հազկերտ Բ-ի հրովարտակը քրիստոնեությունից հրաժարվելու ,պարսկական կրոն ընդունվելու մասին
450թ.	Հայ ավագ նախարարների և հոգևոր պետերի Արտաշատի ժողովը
450թ. ապրիլի 16	Հայ նախարարների `Տիզբոն կանչվելը
450թ. ապրիլի վերջ	նախարարների առերես ուրացումն ու Հայաստան կանչվելը
450թ. մայիսի25	Ձարեհավանի հակապարսկական ցույցը Ղևոնդ Երեցի գլխավորությամբ մայիսի 25-ին
450 մայիս	Ատոմ Գնունու դեսպանության գործուղումը Կ.Պոլիս`զինվորական օգնություն հայցելու
450 հուլիս 1-5	Թեոդոս Բ կայսրը խոստանում է օգնել հայ ապստամբներին
450 հուլիս20	Թեոդոս Բ կայսրը վախճանվում է
450օգոստ.10	Հայ նախարարների և հոգևոր պետերի գաղտնի ժողովը և կեղծուրացության ավարտը
450 օգոստոս-սեպտեմբեր	Վասակ Սյունու ձերբակալումն ու կեղծ երդումը
450 օգոստոսի վերջ	Պարսկական բանակի հարձակումը Աղվանքի վրա

450օգոստոսի 24	Մարկիանոս նոր կայսեր `գահ բարձրանալը
450 սեպտ.վերջ	Հայոց գունդը օգնության է հասնում Աղվանքին
450 հոկտեմբեր	Վարդանանց գնդի հաղթանակը խաղխաղի ճակատամարտում
450 նոյեմբեր	Հայոց գնդի վերադարձը Աղվանքից
450 դեկտեմբեր	Հազկերտ Բ-ի հրովարտակը պաշտամունքի ժամանակավոր ազատության մասին
451 հունվար	Մարկիանոս կայրսը մերժում է օգնությունը հայ ապստամբներին
451 փետրվար	Տիզբոնը չեղյալ է հայտարարում պաշտամունքի ազատության վերաբերյալ իր հրովարտակը:Վերսկսում են կրոնական բռնությունները:
451 մայիսի 28	Ավարայրի ճակատամրտը
451 հուլիս	Ապստամբությունը շարունակվում է:

Խմբային հետազոտության մեթոդի միջոցով յուրաքանչյուր սովորող մշակում ,ուսումնասիրում է տվյալ ուսումնական նյութի հատվածը:Հետո տեղի է ունենում սովորածի փոխանցում ընկերոջը:

ՔԱՅԼ 5:Խմբերին տրվում է առաջադրանք: <<3բանալի և 1 կողպեք>>մեթոդի միջոցով սովորողները տրված տեքստից ընտրում են բովանդակությունը ներկայացնող երեք տարբերություն :Սրանք երեք բանալիներն են ,իսկ հետո կազմվում է 1 նախադասություն (սեփական բառերով),որն արտահայտում է տրված տեքստի բովանդակությունը:Սա է կողպեքը:

Հատված <<վարդանանք>.պատմավեպից:

<<Գիշերը սքողում էր վասակի ապարանքը:Խավարի թանձր մանրափոշին կլանել էր պարսպի և շենքի ստվերագծերը;Անլույս պատուհանները խոսում էին ապարանքի բնակչի մենության մասին :

Եվ,իրոք,մենակ էր Վասակը;

Խռովահույզ մտքեր էին պաշարել նրան:Վերջին օրերի անցուդարձը սրընթաց կատաղությամբ եկավ ու լցվեց նրա շուրջը և տակնուվրա արին նրա գործերը:Ապստամբությունը ,որի դեմ նա այդքան սարսափով պայքարել,զսպել էր ,շղթազերծ փոթորկի նման փրթեց գնաց ողջ երկրով մեկ:Պարսից ջարդված զորագնդերը ,Հայաստանից փախած,գնում են հիմա `լուրը տանելու և այլանդակ համեմատության հասցրած չարախոսությամբ լցնելու իրենց երկիրն ու արքունիքը:Ի՞նչ կմտածեն իր՝ Վասակի մասին ...

Աղավնակերպ յուղի ճրագը աղոտ լույս էր սփռում Վասակի մռայլ դեմքին :Վասակը նստած էր քարե արձանի պես և նայում էր խավարի մեջ>>:

ՔԱՅԼ 6:Խմբերի ներկայացում :

ՔԱՅԼ 7:Ամփոփում :Դասակարգել Վարդանանց ու Վասակյանց:

ՎԱՐԴԱՆԱՆՔ

Մամիկոնյան գերդաստան	տիկնայք փափկասուն հայոց աշխարհի	Արտակ Մոկաց Ատոմ Գնունի	Վահան Ամատունի Սրվանձտյա Գարեգին	հոգևորականություն

հայ ժողովուրդ

ՎԱՍԱԿՅԱՆՔ

Վասակ Սյունի՝Հայաստանի մարզպան	Ուրծա Ներսեհ Գադիշո Խոռխոռունի	Գյուտ Վահևունյաց	Արտակ Ռշտունի	Վարազդուխտ

Խմբագրման միջոցով սովորողը մեկ անգամ ևս կընդհանրացնի անցածը:

ՔԱՅԼ 8: Տեղին է օգտագործել ԳՈՒՍ-ի մեթոդը:

Գ	Ու	Ս
Եղիշե<<Վասն վարդանայ և հայոց պատերազմին>> Դեմիրճյան<<Վարդանանք>>	Լրացուցիչ նյութեր թեմայի վերաբերյալ	Վեպի շարժառիթը սյուժեն վերլուծություն ժամանակագրական աղյուսակի կազմում ամփոփում

ՔԱՅԼ 9: խմբերի հետազոտական աշխատանքի գնահատում գնահատման սանդղակի միջոցով:Շատ կարևոր է ,որ աշակերտները գնահատեն հետազոտության նպատակը ,ընթացքը ,արդյունքը:

ՔԱՅԼ 10:
Լսել<<Նորահրաշպսակավոր>>շարականը(խոսք՝Շնորհալու,երաժշտություն՝Կոմիտաս վարդապետ):

ՔԱՅԼ 11: Տնային աշխատանք :Տեղեկություններ հավաքելՎարդանանց նվիրված ստեղծագործությունների վերաբերյալ :Լսել երգերն ու մեկնաբանել դասարանում :

III ԴԱՍ

Առարկան՝հայ գրականություն

Դասարան՝տասնմեկերորդ

Դասատիպ՝ԽԻԿ համակարգ

Թեման՝Դ.Դեմիրճյանի<<Վարդանանք>>պատմավեպի ուսուցումը:

Դասի նպատակը;Սովորողների մոտ ամրապնդել ձեռք բերած գիտելիքները ,զարգացնել բառապաշարը ,աշխարհայացքի ձևավորում,գեղագիտական ճաշակի զարգացում ,հայրենասիրության սերմանում ,պատմական փաստերի տրամաբանական վերլուծում ու եզրահանգում ,ստացած գիտելիքի արժևորում :

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ հմտությունների ձևավորման նպատակները:

Սոցիալական հմտությունների ձևավորման ,զարգացման նպատակը աշակերտների մոտ մյուսներին օգնելու ,խմբի անդամներին խրախուսելու ,համագործակցելով խնդիրներ լուծելու ձեռքբերումն է:

ՔԱՅԼ VI: Գնահատում:

Գնահատել խմբի համագործակցային հմտությունները գնահատման թերթիկի միջոցով:

Պատրաստել գնահատման թերթիկխմբային ներկայացումները գնահատելու համար:դրանցում կարելի է նշել բոլոր խմբերի ուշագրավ հարցերն ու պատասխանները և դրանց դիմաց մրցանակային նիշ դնել:Իսկ ոչ ուշագրավ կամ սխալ պատասխանի դեպքում չդնել;Աշակերտները նախօրոք պետք է տեղեկացված լինեն ,թե գնահատման ինչ ձև է կիրառվելու:

ՔԱՅԼVII: Տնային աշխատանք:Տրված հատվածին ծանոթանալ և ներկայացնել քառաբաժան աղյուսակի միջոցով:

1.<<Կգան օրեր ,և ինքը կբերի օրերը:հայաստանն իր ձեռքը կընկնի:նա ոտի տակ կտրորի այս դենշապուհներին ,կոչնչացնի վարազվաղաններին ,այս նախարարներին ,այս հոգևորներին ,կուժեղացնի երկիրը և ինքը կմնա Հազկերտի առաջ անմրցակից մարզպան ,իսկ ապա և թագավոր:կձուլվե՞ն հայերը պարսից հետ՝հազիվ թե,բայց այդ չէ կարևորը...Ուժեղ երկիր կլինի ,գլուխը կբարձրացնի ,և ո՛չ պարսիկ ,ո՛չ հույն այլևս չեն համարձակվի տեր ու տիրություն անել այս երկրում :Իսկ հիմա ինչի՞ է նման...>>:

ՔԱՌԱԲԱԺԱՆՈՒՄ:

Տեսաղական պատկերներ	**Զգացում**
Ես տեսնում եմ պատմական Հայաստանի քարտեզը ,իսկ հետո թագավորական գահին բազմած Վասակին `խոհուն ու նենգ հայացքով,իսկ գլխավերևում լուսապսակի փոխարեն օձե օղակ եմ տեսնում:	**Դավաճանների** նկատմամբ ատելություն ,հիասթափություն,միաժամանակ հայրենասիության ավելի խորը զգացում `դավաճաններից հայրենիքը պաշտպանելու,ու պատիժներ չներող ու արդարամիտ:

Զուգորդում	**Նոր վերնագիր**
Ռաֆֆու <<Սամվել>>պատմավեպից Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի կերպարները: <<Գևորգ Մարզպետունու>>պատմավեպից Աշոտ Երկաթի կերպարը(հակասականությունը)	**<<**Փառասիրության գինը>> <<Դավաճանությունը չի ներվի>>

Միջոցները: Առաջադրանքը ներկայացվում է `թերթիկի վրա շարադրված:

Դասասենյակի դասավորվածությունը:Յուրաքանչյուր խումբ պետք է նստի մեկ սեղանի շուրջ;

Ընթացքը: Դասարանը բաժանել խմբերի:

ՔԱՅԼ 2:Առաջադրանք խմբերին:

Առաջին խումբ: Կատարել կոմպոզիցիոն վերլուծություն ,որոշել վեպի հիմնական մասերը և բացահայտել նրանց միջև եղած պատճառահետևանքային կապերը:Կազմել պլան:

Երկրորդ խումբ: Ղանալանյանի <<Ավանդապատում>>գրքից դուրս գրել Վարդան Մամիկոնյանին վերաբերող ավանդապատումները:

Երրորդ խումբ: Խմբավորել պատմավեպում տեղ գտած աֆորիզմները:

ՔԱՅԼ 3:Խմբերի աշխատանքների ներկայացում :

Առաջին խումբ;

1.Վարդանը Աշտիշատի վանքում :<<Գիշերը խոժոռվել էր Տարոնի դաշտավայրի վրա...>>:

2.Արտաշատի համաժողովը.<<Գիշերը շշնջում էր Արտաշատում...>>:

3. Հայ նախարարները պարսից ատյանում .<<Հազկերտի խոսքերը բոցի ցոլքումներով

նետվեցին դեպի պալատականները,և սրահը հրդեհվեց>.:

4. Գլխատված երկիրը.<<Նախարարների `Պարսկաստան գնալուց հետո խռովքն ու խառնաշփոթը տարածվեց ողջ Հայոց աշխարհում>.:

5. <<Ուրացյալների>>վերադարձը .<<Արտաշատում և գավառներում խուլ մռմռում էր ապստամբությունը>>:

6.Ավարայրի ճակատամարտը.<<Մահ ոչ իմացեալ մահ է,մահ իմացեալ`անմահութիւն>>:

7. Վերջերգ (էպիլոգ).<<Մենավոր մի դամբարան...>>:

Երկրորդ խումբ:

Վարդան զորավարի անունը հավերժացնող սրբավայրեր են կառուցվել հայոց աշխարհի տարբեր վայրերում:վան քաղաքի ամենագեղեցիկ տաճարներից մեկը կոչվել է <<Վարդան զորավար>>,որի հիմքում ,ըստ ավանդության,դրված է զորավարից մի մասունք:վասպուրականից Հայոց ձոր գավառի Առեղ գյուղի մոտ `Սուրբ Վարդանի վանքը և այլն...

Հայ ազգը գուրգուրանքով է պահպանել մեծ զորավարի անվան հետ կապված ամեն հիշատակ;Սուրբ Վարդանի քարը`Հրազդանի շրջանի ալափարս գյուղում ,որը,ըստ

ավանդության ,տեղացիները բերել են Մակուից .ասում են `քարի վրա ժամանակին թափվել է Վարդանի արյունը:

Իջևանի շրջանի ակնաղբյուր գյուղի բազմադարյան կաղնին,որը,նորից ըստ ավանդության, տնկել է Վարդանը.հսկա կաղնու տակից հոսում է զորավարի հորդ ու վճիտ աղբյուրը:Գյուղի երիտասարդները կռիվ գնալիս այդ աղբյուրից են ջուր խմել ,որ իրենց մահ չպատահի:

1977 թ.մայիսին ,երբ Երևանում բացվեց իրեն նվիրված հուշարձանը ,ուժեղ փոթորկի հետևանքով տապալվեց զորավարի տնկած 1527-ամյա կաղնին :Շատ չանցած՝ մարշալ Բաղրամյանը նույն վայրում տնկեց կաղնու նոր ծառ.նորօրյա զորավարը կենդանություն պարգևեց հնօրյա զորավարի բազմադարյան կաղնուն :կաղնու միջոցով վարդանանց ոգին փոխանցվում է սերնդեսերունդ:

ԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ: Աֆորիզմներ ու թևավոր խոսքեր:

<<Խաղաղություն չկա գայլի հետ>>-էջ 181

<<Հայ պիտի տամ ,իշխա՛ն ,ինչքան էլ զենքերը իրար զարկեն `հաղթանակը հայինն է :Դուք զենքով զարկե՛ք ,մենք՝հացով>>- էջ 450

<<Պատերազմ պետք է լինի,որ խաղաղություն լինի>> էջ54

<<Ուր թագավոր-իշխան `այնտեղ պատերազմ-արյուն>> էջ 100

<<Ռամիկը իշխանի բերանով որ ուտում է ,շատ կապրի>> էջ522

ՔԱՅԼ ՉՈՐՐՈՐԴ:

Т-աձև աղյուսակի միջոցով ներկայացնել զրադաշտականության ու քրիստոնեության համեմատականը:

Զրադաշտականություն	Քրիստոնեություն
Զրադաշտ `մոգ նյութական կրակ Զենդ-Ավեստա դուալիզմ(Ահուրա Մազդաո,Ահրիման) արյունապղծական ամուսնություն բազմակնություն մեռելների վրա 40 օր ողբալու սովորույթ սննդակարգում մեռելոտի կերակուրների օգտագործում կախարդություն գուշակություն արարվածի պաշտամունք,ոչ Արարչի	Քրիստոս `աստված հոգևոր լույս ավետիս Աստվածաշունչ միաստվածություն(Սուրբ Երրորդություն) արյունապղծության արգելանք միակնություն մեռելների վրա ողբալու երկարատև սովորույթի արգելում Արարչի ընկալում հոգևորի զարթոնք եկեղեցաշինություն աղոթք արքայություն

Տ-աձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության ,խնդրի երկու կողմերը համեմատելու համար:Այս փուլում աշակերտները համադրում են ,վերլուծում և ինքնուրույն հանգում բացատրության:

ՔԱՅԼ V: Ամփոփում:խթանման փուլում օգտագործել <<Բազմանիստ>>մեթոդը:



6.Աշխատանքի ընթացքում սովորողները հմտացան բանասիրական ,պատմական ուսումնասիրություններ կատարելու մեջ,հավաքեցին բազմազան պատմագիտական ու բանասիրական նյութեր `օգտվելով ինչպես տպագիր գրքերից ,այնպես էլ էլեկտրոնային գրադարանից ,խմբավորեցին նյութերը`համադրելով,ընդհանրացնելով և եզրահանգումներ կատարելով:

Աշխատանքի ընթացքում սնունդ տրվեց աշակերտների երևակայությանը ,բացահայտվեցին ստեղծագործական հնարավորությունները.քնած միտքը արթնացավ:

Սովորողները մշակեցին գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունը:մեկ քայլով ևս առաջ ընթացավ աճող սերնդի գործուն ուսումնառության ,ներդաշնակության և ազգային նկարագրի ձևավորումը:Աշակերտները եզրահանգեցին ,որ ***երբ մի ժողովուրդ կազմակերպված դուրս է գալիս օտար նվաճողների դեմ `հանուն իր ազատ ոգու ու կամքի ,ստիպել նրան կրկին ընտրել բռնակալի լուծը,անհնարին է>>;եվ որ հնազանդության վրա հիմնված <<դիվանագիտությունը>> դիվանագիտություն չէ,այլ թուլամորթ ,կողկողագին ցնդապատրանք,որն այսօր,ցավոք,տեղի է ունենում Հայաստանում :***

Հետևաբար ,ոչ թե պատմության մոխրից կուրանալ ,այլ անթեղից կրակ հանել `սերունդների հոգում Ավարայրներ բոցավառելու համար:

<<Ապրել ոչ իմացեալ մահ է ,ապրել իմացեալ`անմահութիւն>>:

Օգտագործված գրականության ցանկ

Վահագն Մկրտչյան <<Դերենիկ Դեմիրճյանի ստեղծագործական ուղին ,գրական սոցիոլոգիան ,գեղագիտական կոնցեպցիաները>>.Երևան <<Սովետական գրող>>1987

Հայրիկ Մուրադյան <<Վարդանանց ապստամբության մասին >> .Երևան <<Հայաստան>>1989թ.

Հ.Հարությունյան <<Վարդանանց պատերազմը>>1947 թ.

Դեմիրճյան <<Վարդանանք>>պատմավեպը

Եղիշե<<Վասն Վարդանայ և հայոց պատերազմին>>

Փարպեցի <<Պատմություն հայոց>> և <<Թուղթ առ Վահան Մամիկոնյան>>

Ղանալանյան<<Ավանդապատում>>

Ս.Սարգսյան<<Հայ ռազմական արվեստի պատմությունից>>Երևան 1969

Т.Е. Макарова Исследовательская деятельность педагога образовательного учреждения Методические рекомендации для педагогических работников образовательных учреждений

Творческая деятельность педагога в исследовательской педагогической деятельности

Զրադաշտականություն	Քրիստոնեություն
Զրադաշտ `մոգ նյութական կրակ Զենդ-Ավեստա դուալիզմ(Ահուրա Մազդաո,Ահրիման) արյունապղծական ամուսնություն բազմակնություն մեռելների վրա 40 օր ողբալու սովորույթ սննդակարգում մեռելոտի կերակուրների օգտագործում կախարդություն գուշակություն արարվածի պաշտամունք,ոչ Արարչի	Քրիստոս `աստված հոգևոր լույս ավետիս Աստվածաշունչ միաստվածություն(Սուրբ Երրորդություն) արյունապղծության արգելանք միակնություն մեռելների վրա ողբալու երկարատև սովորույթի արգելում Արարչի ընկալում հոգևորի զարթոնք եկեղեցաշինություն աղոթք արքայություն

T-աձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության ,խնդրի երկու կողմերը համեմատելու համար:Այս փուլում աշակերտները համադրում են ,վերլուծում և ինքնուրույն հանգում բացատրության:

ՔԱՅԼ V: Ամփոփում:խթանման փուլում օգտագործել <<Բազմանիստ>>մեթոդը: